ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

«19» 04 2017թ.
հեռ. (0255) 6– 18 - 97
mail: metsparni.lori@mta.gov. am
թիվ ՄՊ-64

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊՐ-Ն Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից Ձեզ եմ ներկայացնում Մեծ Պարնի համայնքի ղեկավարի 2017 թվականի թիվ 23-24 որոշումները:

Առդիր՝ 3 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Գ. Պալյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռիի մարզի Մեծ Պարնի համայնք
ՀՀ Լոռիի մարզ, գ. Մեծ Պարնի, {0255}6-18-97, 094-571-999,
metsparni.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 ապրիլ 2017 թվականի N 23-Ա**

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱԶԳԵՆ ՌԱՖԻԿԻ ԱՎԱԼՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վազգեն Ռաֆիկի Ավալյանին 2017 թվականի փետրվարի 22-ի հայտը, ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ինմասի 2-րդ կետով ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19-իթիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Մեծ Պարնի համայնքի 1-ին փողոց 75-րդ հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Վազգեն Ռաֆիկի Ավալյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2017 թվականի համար:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ԳԱԳԻԿ ՊԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռիի մարզի Մեծ Պարնի համայնք
ՀՀ Լոռիի մարզ, գ. Մեծ Պարնի, {0255}6-18-97, 094-571-999,
metsparni.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

**18 ապրիլ 2017 թվականի N 24-Ա**

### 06-075-0138-0024 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքով, ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի <<Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին>> 01/06/2010թ թիվ 186-Ն հրամանով, ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով հողի սեփականաշնորհման որոշումից քաղվածքը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Մեծ Պարնի համայնքի 06-075-0138-0024 ծածկագրի տակ գտնվող 0.18413 հա հողամասի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը և փաստացի օգտագործվող 0.18413 հա հողամասի նկատմամբ ճանաչել Նորիկ Մարգարյան Մխիթարի /ծնված 1947թ/, Բավական Մարգարյան Արամայիսի /ծնված 1952թ/, Տիգրան Մարգարյան Նորիկի /ծնված 1972թ/, Աշոտ Մարգարյան Նորիկի /ծնված 1973թ/, Էմմա Մարգարյան Նորիկի /ծնված 1976թ/, Մխիթար Մարգարյան Նորիկի /ծնված 1983թ/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը, որից 0.13 հա-ը փաստացի հատկացված, 0.05413 հա-ը՝ օրենքի ուժով:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:

3. Ճանաչել 06-075-0138-0024 ծածկագրի տակ գտնվող 0.18413 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1992թվ կառուցված 121.43քմ բնակելի տան և 58.2 քմ անասնագոմի նկատմամբ Նորիկ Մարգարյան Մխիթարի / ծնված 1947թ /, Բավական Մարգարյան Արամայիսի / ծնված 1952թ /, Տիգրան Մարգարյան Նորիկի /ծնված 1972թ /, Աշոտ Մարգարյան Նորիկի /ծնված 1973թ /, Էմմա Մարգարյան Նորիկի /ծնված 1976թ /, Մխիթար Մարգարյան Նորիկի /ծնված 1983թ / ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցե՝ Մեծ Պարնի համայնք, 12 փողոց, 46 բնակելի տուն:
6. Ուժը կորցրած ճանաչել 27/03/2017թվականի N 21-Ա որոշումը:

Համայնքի ղեկավար Գ. Պալյան